

04. 10. 2013թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):

Հրավիրված էին՝ Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Հ.Եղիազարյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ), Գ. Թորոսյան (տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ), Կ.Կույունջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Գ. Նշանյան (գյուղատնտեսական համատարած հաշվառման պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Լ. Խաչատրյան (մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` յոթ հարց.

1. «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև թիվ 34-ԶԱ (տարեկան), «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 12-ԶԱ (եռամսյակային), «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 1-չարտեր (եռամսյակային), «Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» Ձև թիվ 35-պատահար (ամսական), «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց կառույցների մասին» Ձև թիվ 1-ճան (տարեկան), «Արդյունաբերական նշանակության երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-երկաթ (տարեկան), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» Ձև թիվ 65-երկաթ (տարեկան), «Մետրոպոլիտենի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-մետրո (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության մասին» Ձև թիվ 3-ավտո (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» Ձև թիվ 1-տրանսպորտ (տարեկան), «Հեռագրական կապի մասին» Ձև թիվ 31-կապ (տարեկան), «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 41-կապ (տարեկան), «Հեռուստատեսության, ռադիոհեռարձակման և ռադիոկապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 51-կապ (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և համապատասխանաբար «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 41, 39, 37, 44, 17, 24-Ն, և ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 14, 19, 16, 17, 24, 25 և 27-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Գ.Թորոսյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Ա.Հայրապետյան/

3. «Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական հաշվետվության ամփոփ ձևերը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հավանությանն արժանացնելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Կ.Կույունջյան/

4. «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ձև թիվ 01-ԵՀԱ (եռամսյակային), ձև թիվ 01-ԵՀԱ (տարեկան), ձև թիվ 70-ՏԱ (տարեկան) և ձև թիվ 71-ՏԱ (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

/Ձեկուցող` Յու. Պողոսյան/

5. «ՀՀ ՎՊԽ 2013 թվականի հուլիսի 19-ի թիվ 20-Ա, թիվ 22-Ա և 2013 թվականի օգոստոսի 28-ի թիվ 31-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Գ.Նշանյան/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1. Հաղորդում` Ավստրիայի Վիեննա քաղաքում 2013 թվականի օգոստոսի 5-ից 16-ը Արժույթի միջազգային հիմնադրամի ինստիտուտի հրավերով, «Եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով ուսուցողական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող` Լ.Խաչատրյան/

6.2. Հաղորդում` Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 17-ից 18-ը Եվրամիության հարևանության և համագործակցության քաղաքականության գործիքների շրջանակում «Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգ» /ԵՀՀԶ-ԷՏՄՀ/ նախագծի Ղեկավար կոմիտեի նիստին և Ծրագրի ազգային համակարգողների տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող Յու. Պողոսյան/

7. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև թիվ 34-ՔԱ (տարեկան), «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 12-ՔԱ (եռամսյակային), «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 1-չարտեր (եռամսյակային), «Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» Ձև թիվ 35-պատահար (ամսական), «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց կառույցների մասին» Ձև թիվ 1-ճան (տարեկան), «Արդյունաբերական նշանակության երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-երկաթ (տարեկան), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» Ձև թիվ 65-երկաթ (տարեկան), «Մետրոպոլիտենի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-մետրո (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության մասին» Ձև թիվ 3-ավտո (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» Ձև թիվ 1-տրանսպորտ (տարեկան), «Հեռագրական կապի մասին» Ձև թիվ 31-կապ (տարեկան), «Միջազգային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 41-կապ (տարեկան), «Հեռուստատեսության, ռադիոհեռարձակման և ռադիոկապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 51-կապ (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և համապատասխանաբար «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 41, 39, 37, 44, 17, 24-Ն, և ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 14, 19, 16, 17, 24, 25 և 27-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշեցին՝

Հաստատել նշված վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները (թվով 13 հաշվետվական ձև) և համապատասխանաբար ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2003թ. նոյեմբերի 7-ի թիվ 41, 39, 37, 44, 17, 24-Ն, և ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 14, 19, 16, 17, 24, 25 և 27-Ն որոշումները:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «510850.3» թիվը փոխարինել «481701.86» թվով, 3-րդ տողի «94590.0» թիվը փոխարինել «91230.0» թվով, 4-րդ տողի «82505.75» թիվը փոխարինել «82951.2» թվով, ընդամենը տողի «705836.49» թիվը փոխարինել «673773.5» թվով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական հաշվետվության ամփոփ ձևերը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հավանությանն արժանացնելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Կ.Կույումջյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ նշված վիճակագրական հաշվետվության ամփոփ ձևերին համաձայն հավելվածների:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ձև թիվ 01-ԵՀԱ (եռամսյակային), ձև թիվ 01-ԵՀԱ (տարեկան), ձև թիվ 70-ՏԱ (տարեկան) և ձև թիվ 71-ՏԱ (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ նշված վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

5. «ՀՀ ՎՊԽ 2013 թվականի հուլիսի 19-ի թիվ 20-Ա, թիվ 22-Ա և 2013 թվականի օգոստոսի 28-ի թիվ 31-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Նշանյան/

Որոշեցին՝

ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման ժամկետի համապատասխան (նոյեմբերի 10-30-ը ներառյալ), ՀՀ ՎՊԽ անհատական որոշումներով հաստատված մի շարք իրավական ակտերում կատարել ժամկետային փոփոխություններ:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2013 թվականի օգոստոսի 5-ից 16-ը Արժույթի միջազգային հիմնադրամի ինստիտուտի հրավերով, «Եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով ուսուցողական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/

6.2. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2013 թվականի սեպտեմբերի 17-ից 18-ը Եվրամիության հարևանության և համագործակցության քաղաքականության գործիքների շրջանակում «Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգ» /ԵՀՀԶ-ԷՏՍՀ/ նախագծի Ղեկավար կոմիտեի նիստին և Ծրագրի ազգային համակարգողների տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ